

СОЦИОЛОГИЯ

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները և հեռանկարները ՀՀ-ում

ՀՏԳ 304

Նաչարյան Ա. Խ.

Դասախոս, հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն, Շիրակի Մ. Նաչարյանի անվան պետական համալսարան (Գյումրի, ՀՀ)

artnajaryan@gmail.com

Հանգուցաբառեր՝ երիտասարդական աշխատանք, երիտասարդական կենտրոն, երիտասարդական ասոցիացիա, երիտասարդական ճամբար, երիտասարդական աշխատող, երիտասարդական աշխատանքի ինստիտուտ, երիտասարդական քաղաքականություն:

Основные проблемы и перспективы становления института молодежной работы в РА

Наджарян А. Х.

Преподаватель кафедры психологии, социологии и социальной работы Ширакский Государственный Университет имени М. Налбандяна (Гюмри, РА)

artnajaryan@gmail.com

Аннотация. Целью статьи является выявление основных проблем и перспектив молодежной работы в РА. Наша задача – изучить нынешнее состояние, предпосылки развития, цели, направления и принципы института молодежной работы в РА. Также, в результате представлен сравнительный анализ со странами, достигшими успешного опыта в данной сфере.

В ходе проведения исследования были использованы методы эмпирического исследования.

В результате, мы пришли к следующему заключению: молодежная работа способствует индивидуальному, социальному и образовательному развитию молодежи. Она развивает потенциал молодежи, помогает им полностью основаться в обществе, стимулирует взятие ответственности и принятие самостоятельных решений относительно их собственной жизни, ценностей и развития.

Молодежная работа – инструмент, способствующий личному развитию молодежи, социальному включению и активному гражданскому формированию. Таким образом, можем отметить, что в процессе формирования института молодежной работы есть множество проблем. К примеру, отсутствие законодательных органов, регулирующих данную сферу деятельности, несовершенство, низкий уровень признания молодежной работы, неопределенность основных стратегических целей молодежной работы, дефицит систем, программ и материалов для подготовки молодежных работников. На основе всех выше перечисленных проблем, разработаны пути улучшений.

Ключевые слова: молодежная работа, молодежный центр, молодежная ассоциация, молодежный лагерь, молодежный работник, институт молодежной работы, молодежная политика.

The Problems and Prospects of Establishing the Institute of Youth Work in the Republic Of Armenia

Najaryan A. Kh.

Lecturer, Chair of Psychology, Sociology and Social Work, Shirak State University after M. Nalbandyan, (Gyumri, RA)

artnajaryan@gmail.com

Abstract. The article is aimed at revealing the problems and perspectives in the Republic of Armenia for the establishment of the institute of youth work. Our objective is to study the current state of the institute of youth work and the preconditions goals, directions and principles for its development. In the result, a comparative analysis with countries with successful experience was also presented.

The research has been conducted by using empirical research methods.

As a result of this research, we came to the conclusion that youth work contributes to the individual, social and educational growth of young people, develops their potential, helps young people to fully establish themselves in the society, encourages them to take responsibility and make conscious decisions about their personal life, values and development. Youth work is a tool for the personal development, social inclusion and active citizenship of the young people.

To summarize, we can conclude that there are numerous problems in the process of establishing the institute of youth work, such as the lack of a legislative framework for the coordination of the field, the imperfections, the low level of the recognition of youth work, the uncertainty of the main strategic goals, the lack of systems, programmes and study materials for the training of youth worker specialists. Based on these issues, guidelines for improvement have been developed.

Սոցիալական համախմբվածությունն և ժողովրդավարության ամրությունը կախված է հասարակության բոլոր անդամների, այդ թվում՝ երիտասարդների քաղաքացիական ակտիվությունից: Այսօր երիտասարդների համար երիտասարդական աշխատանքի աջակցությունն ու հնարավորությունները կարևոր են, եթե մենք ցանկանում են ունենալ լավագույն պայմաններ կյանքի նոր փուլ անցնող երիտասարդների համար: Ընտանիքի, ընկերների և դպրոցի ազդեցությունը և աջակցությունը կարևոր է երիտասարդների համար, սակայն հայտնի է նաև, որ երիտասարդների մեծամասնությունը կարիք ունի լրացուցիչ հնարավորությունների, օգնության, ռեսուրսների և գործիքների՝ որպես անհատ և, առավել ևս, որպես հասարակության անդամ և երիտասարդ քաղաքացիներ: Երիտասարդական աշխատանքն օգնության միակ աղբյուրը չէ: Այնուամենայնիվ, այն կարևոր նշանակություն ունի, քանի որ այն երիտասարդներին տալիս է ուսման լրացուցիչ հնարավորություններ և ընդլայնում է նրանց հայացքները:

Երիտասարդական աշխատանքը բազմապրոֆիլ և բազմաբնույթ պրակտիկա է: Այն իրականացվում է զանազան պայմաններում, սկսած չկազմակերպված պարապմունքներից մինչև կազմակերպված ծրագրերը, որոնք ներառում են մեծ թվաքանակի երիտասարդների, շոշափում են բազմաբնույթ թեմաներ և փոխներգործում են տարբեր այլ դասընթացների և պրակտիկաների հետ: Այս բազմակողմանիությունն երիտասարդական աշխատանքի ուժեղ կողմերից մեկն է: Երիտասարդական աշխատանքը կարողանում է ճկուն արձագանքել բազմազանությանը: Մասնատու մնալով մեթոդական տարբերակումը սկիզբ են առնում երիտասարդական աշխատանքի հասանելիությունը

մեծացնելու անդադար փորձից, բայց միևնույն ժամանակ, այդ բազմակողմանիությունը բերում է մասնատման և արդյունքի ոչ հստակ լինելուն [1]:

Ֆիլիպ Կուսեն, ինչպես Ուլյամսոնը [2], հաստատում է, որ դժվար է բնորոշել երիտասարդական աշխատանքի բնորոշ հատկանիշները: Երիտասարդական աշխատանքն ամբողջ Եվրոպայում ունի բնորոշման խնդիր, որը պայմանավորված է երիտասարդական աշխատանքի նկատմամբ երկիմաստ վերաբերմունքով: Այս ոլորտի աշխատողները հանդիպում են թե՛ գովեստների և թե՛ քննդատությունների: Երիտասարդական աշխատանքը հզոր կրթական գործիք է, այն կյանքի դպրոց է, որն ապահովում է անհրաժեշտ հմտություններ՝ մեր ռիսկային հասարակությունում գոյատևելու համար: Ինչպես նաև այն ընդլայնում է երիտասարդների սոցիալական միջավայրը: Իսկ երկակի վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է լինում երիտասարդական աշխատանքին ներկայացվող կարգավիճակից: Որոշ երկրներում կարող ենք հաղիպել կամավոր և մասնագիտացված երիտասարդական աշխատանքների միջև անհամապատասխանություն [3]: Երիտասարդական աշխատանքի (այսուհետ՝ ԵԱ) ոլորտում, երիտասարդական քաղաքականության դաշտում շրջանառվում են երիտասարդական աշխատանքի բազմաթիվ ու բազմազան սահմանումներ և միակ բացարձակ սահմանում գտնելու փորձերը հաջողության չեն հասնում, քանի որ տարբեր երկրներում ոլորտը տարբեր դիմանկար ունի և դրանք ունիֆիկացնելու արժեքը մեծ չէ: Ուստի ներկայացնենք տարբեր երկրների և կազմակերպությունների կողմից ընդունվող սահմանումները:

Աղյուսակ 1. Երիտասարդական աշխատանքի սահմանումները և հիմքերը [4]

Երկիր կամ միություն	Սահմանում	Հիմքեր
Հայաստանի Հանրապետություն	ԵԱ համարվում է երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանքը կամ աշխատանքը, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը:	Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգ [5] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարություն [6] Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ [7]
Եվրամիություն	ԵԱ-ն ընդգրկում է գործունեությունների շարք (օր.՝ սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային և քաղաքական), որոնք իրականացվում են երիտասարդների հետ, նրանց համար և նրանց կողմից՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջոցով:	Եվրոպական հանձնաժողովի սպիտակ թուղթ. նոր խթան Եվրոպացի երիտասարդության համար [8]

<p>Էստոնիա</p>	<p>ԵԱ-ը զարգացմանը միտված միջոցառումների համար պայմանների ստեղծումն է, որոնք ունակ է դարձնում երիտասարդին գործել ընտանիքից դուրս, դպրոցական կամ իր ընտրության աշխատանքային միջավայրում:</p>	<p>Երիտասարդական աշխատանքի ակտ (1999) [9], Էստոնիայի երիտասարդական աշխատանքի հայեցակարգ [10], Էստոնիայի երիտասարդության աշխատանքի զարգացման ծրագիր 2014-2020 [11]</p>
<p>Ֆինլանդիա</p>	<p>ԵԱ-ն ակտիվ քաղաքացիության առաջխաղացումն է՝ օգտագործելով երիտասարդների ազատ ժամանակը, երիտասարդների ինքնուրույնացումը, աջակցումը նրանց զարգացմանն ու անկախությանը, ինչպես նաև սերունդների միջև շփումներին ու գործակցությանը:</p>	<p>Երիտասարդության աշխատանքների օրենք(1986, 1995 և 2006) [12]</p>

Ուսումնասիրելով տարբեր երկրների կողմից ընդունված սահմանումները՝ կարող ենք նշել, որ երիտասարդական աշխատանքը կրթական, սոցիալական, մշակութային միջոցառումների միջոցով ակտիվ ու ինքուրույն երիտասարդ սերունդի ձևավորումն է հասարակությունում, ովքեր կկարողանան արագ հարմարվել ժամանակակից մրցունակ աշխարհի մարտահրավերներին: Ինչպես նաև առանձնացնենք, որ ուսումնասիրված երկրներում և Երվրամությունում երիտասարդական աշխատանքը կազմակերպվում է արդեն ձևավորված իրավական դաշտում, գոյություն ունի հստակ օրենքներ, հայեցակարգ և ռազմավարություն, որոնք Հայաստանում դեռևս հստակ ձևավորված չէ: ՀՀ-ում 2014 թ.-ին ընդունվել է Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, 2015 թ.-ին ընդունվել է Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը և վերջերս մշակվել է ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը 2021-2025 թթ: Այս ամենը թույլ չի տալիս լիարժեք լուծել ոլորտում առաջացող խնդիրները:

Երիտասարդական աշխատանքի նպատակները և կազմակերպման ոլորտները

Երիտասարդական աշխատանքն երիտասարդների համար գործունեության զարգացման համար պայմանների ստեղծումն է, ինչը նրանց, իրենց կամքի ազատության համաձայն, թույլ է տալիս գործել ընտանիքից դուրս ստանալ կրթություն և իրականացնել որոշակի աշխատանք: **Երիտասարդական աշխատանքի առարկան** 7-26 տարեկան հասարակության անդամ է: Իսկ **Երիտասարդական աշխատանքի նպատակն** է ստեղծել նախադրյալներ և աջակցել երիտասարդին, որպեսզի նա կարողանա հաջողության հասնել որպես հասարակության անդամ: Երիտասարդական աշխատանքը սկսվում է այնտեղ, որտեղ կան երիտասարդներ՝ իրենց սեփական աշխարհայացքով, կարծիքներով և հետաքրքրու-

թյուններով: Այն երիտասարդի համար պայմաններ է ստեղծում անձնական (անձնական) և սոցիալական զարգացման համար՝ ոչ ֆորմալ ուսուցման միջավայրում նոր գիտելիքների և հմտությունների յուրացման միջոցով, ինչպես նաև այն խթանում է էթիկական համոզմունքները, քաղաքացիությունը և հարգանքն երիտասարդների մոտ այլ մշակույթների նկատմամբ:

Երիտասարդական աշխատանքի սկզբունքները. [13]

- Երիտասարդների և երիտասարդների հետ միասին կազմակերպվում է երիտասարդական աշխատանք՝ նրանց ներգրավելով երիտասարդության աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման մեջ:
- Երիտասարդական աշխատանքը հիմնված է երիտասարդության կարիքների, հետաքրքրությունների և ցանկությունների վրա:
- Երիտասարդական աշխատանքը հիմնված է երիտասարդության մասնակցության և կամավոր կամքի վրա:
- Երիտասարդական աշխատանքը հիմնված է երիտասարդության անձնական նախաձեռնության վրա:
- Երիտասարդական աշխատանքը բնութագրվում է ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ինտեգրմամբ:
- Երիտասարդների աշխատանքն առաջնորդվում է էթիկական նկատառումներով և յուրաքանչյուր մարդու հավասար վերաբերմունքի սկզբունքով:
- Երիտասարդության հետ աշխատելիս երիտասարդ աշխատողն ելնում է հանդուրժողականության և գործընկերության սկզբունքից:

Երիտասարդական աշխատանքը կազմակերպվում է տարբեր հաստատություններում և տարբեր ձևերով՝ օգտագործելով բազմազան մեթոդներ: Երիտասարդական աշխատողի դերն

ու աշխատանքային մեթոդները կախված են երիտասարդների աշխատանքի տեղից, իրավիճակից, թիրախային խմբից և նպատակներից: Այս դերերը ներառում են աշխատել երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, ծրագրեր և նախագծեր պլանավորել և գնահատել, առաջատար գործընկերներ, շենքեր և սարքավորումներ կառավարել, համագործակցել այլ մասնագետների, ծնողների և հետաքրքրող խմբերի հետ: Դպրոցներում հետաքրքրությունների շրջանակից կախված աշխատում են տարբեր բնագավառների մասնագետներ, ովքեր լրացուցիչ գիտելիքներ են ձեռքբերքում երիտասարդական աշխատանքի ոլորտում: Երիտասարդական աշխատանք իրականացնողները, աշխատելով դպրոցներում, կենտրոնանում են երտասարդական աշխատանքների կազմակերպման կամ դրա գործնական իրականացման վրա՝ կախված դպրոցի զարգացման ծրագրի կարիքներից և պայմաններից: Ներկայացնենք երիտասարդական աշխատանքների կազմակերպման հաստատությունները և դրանց բնութագրերը [14]:

Երիտասարդական ասոցիացիաներն

երիտասարդական կազմակերպություններ և ոչ ֆորմալ երիտասարդական խմբեր են: Երիտասարդական համայնքն առաջնորդվում են այն սկզբունքով, որ ասոցիացիայի նպատակներն ու գործունեությունն որոշվում է անդամների ընդհանուր որոշմամբ: Երիտասարդական ասոցիացիաները գործում են երիտասարդական աշխատանքի մեկ կամ մի քանի ոլորտներում: Երիտասարդական ասոցիացիաներում երիտասարդական աշխատանքների մեծ մասն իրականացվում է կամավորության սկզբունքով: Կարևոր են երիտասարդական ժողովները (երիտասարդական խորհրդարան/ երիտասարդական խորհուրդ), որոնք չունեն իրավական կարգավիճակ և ընտրվում կամ պատվիրակվում են երիտասարդների կողմից: Երիտասարդական ժողովների նպատակն է մասնակցել որոշումների կայացման գործընթացին և պաշտպանել երիտասարդների շահերը:

Երիտասարդական կենտրոնների գործունեությունը կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ շահույթ չհետապնդող միությունները: Երիտասարդական կենտրոնները կարող են տարբեր լինել. երիտասարդական բաց կենտրոններ, տեղեկատվության և խորհրդատվության կենտրոններ, երիտասարդական աշխատանքի կենտրոններ և այլն: Երիտասարդական կենտրոններում երիտասարդական աշխատանքը կազմակերպվում է երիտասարդական աշխատանքի մի քանի ոլորտներում (օրինակ՝ տեղեկատվություն, խորհրդատվություն, հոբբիի գործունեություն և այլն) կամ կենտրոնանալ մեկ հատուկ մեթոդի

վրա (օրինակ՝ երիտասարդների բաց աշխատանք): Երիտասարդական կենտրոններն իրականացնում են երիտասարդությանն առնչվող աշխատանքներ:

Հետաքրքրությունների շրջանակի

դպրոցները գործում են երիտասարդական աշխատանքի ավելի պաշտոնական մասում՝ առաջարկելով երիտասարդներին հետաքրքրությունների շրջանակի կրթություն՝ հիմնվելով ուսումնական ծրագրի վրա: Հետաքրքրությունների շրջանակում առաջարկվող կրթության տեսակները տարբեր են՝ սպորտ, երաժշտություն, արվեստ, պար, դրամա, բնություն, ձեռագործություն, տեխնոլոգիա և այլն: Հետաքրքրությունների դպրոցները կարող են նաև կազմակերպել երիտասարդական բաց աշխատանք, առաջարկել տեղեկատվական ծառայություններ:

Երիտասարդական ճամբարները գործում են որպես իրավաբանական կամ հասարակական իրավաբանական անձ, որոնք գրանցված են առևտրային ռեգիստրում, շահույթ չհետապնդող միությունների և հիմնադրամների ռեգիստրում կամ եկեղեցիներում, ծխական համայնքներում և ծխական միություններում, որոնց կառավարությունը կամ կրթության և գիտության նախարարությունը տրամադրել է գործունեության թույլտվություն:

Ծրագրերն ու նախագծերն իրականացվում են տարբեր վայրերում, տարբեր կառույցների կամ անհատների կողմից: Տարածված են երիտասարդական փոխանակման ծրագրերը, միջոցառումները, արշավները և նախագծային գործողությունները. ծրագրեր, որոնք կենտրոնացած են երիտասարդական ասոցիացիայի, երիտասարդական ճամբարի, երիտասարդական կենտրոնի կամ հետաքրքրությունների դպրոցի հիմնական գործունեության վրա:

Երիտասարդական աշխատանքի բնագավառները գործողության պայմանագրային բաժանումներ են, որոնք պարզեցնում են երիտասարդական աշխատանքի կազմակերպումը և ստեղծում են գնահատման համեմատության հնարավորություններ: Երիտասարդների հետ հատուկ աշխատանքը ռիսկի տակ գտնվող և (կամ) վարքագծի խնդիրներ ունեցող երիտասարդների զարգացման նախադրյալների ստեղծումն է՝ երիտասարդների կարողությունների և հմտությունների ակտիվացման և նրանց մոտիվացիայի բարձրացման միջոցով: Անդրադարձանք նաև երիտասարդական աշխատանքի ոլորտներին, որոնք հետևյալն են [14]՝

- Երիտասարդների հետաքրքրությունների շրջանակի կրթությունը և գործունեությունը երկարաժամկետ (հետաքրքրությունների շրջանակի կրթություն) կամ կարճաժամկետ (հետաքրքրությունների

շրջանակի գործունեություն) համակարգված, վերահսկվող գործունեություն է, որին մասնակցելը կամավոր հիմունքներով իրականացվում է հիմնական կրթությունից ազատ ժամանակի ընթացքում:

- Տեղեկեկատվության տրամադրում երիտասարդներին իրենից ներկայացնում է երիտասարդներին ժամանակակից, կոմպետենտ, որակյալ և մատչելի տեղեկատվական ծառայությունների տրամադրում:
- Խորհրդատվություն երիտասարդներին. երիտասարդներին խորհրդատվական ծառայություններ տրամադրելը՝ նրանց կյանքում որոշումներ կայացնելու հնարավորություններ ստեղծելու համար:
- Երիտասարդական հետազոտությունը համակարգային և համեմատական հետազոտությունների առկայություն է, որոնք անհրաժեշտ են երիտասարդական աշխատանքի պլանավորման և իրականացման համար:
- Դասընթացներն երիտասարդական աշխատանքի ոլորտում. երիտասարդների որակյալ աշխատանքի համար անհրաժեշտ արժեքների, գիտելիքների և հմտությունների ձեռքբերման և զարգացման մատչելիության և որակի ապահովում, որը կնպաստի երիտասարդական աշխատանքի զարգացմանն ու արդյունավետությանը:
- Երիտասարդների հանգիստ և զարգացում. երիտասարդների առողջության և զարգացման գործունեության հնարավորությունների ստեղծում հանգստի և ժամանցի և ճամբարների կազմակերպման նախագծերի միջոցով:
- Երիտասարդական դաստիարակչական աշխատանքներ. տարբեր միջոցներով երիտասարդների զբաղվածության բարձրացում և աշխատանքի շուկա մուտք գործելիս երիտասարդների վիճակի բարելավում:
- Միջազգային երիտասարդական աշխատանք. երիտասարդության և երիտասարդ աշխատողների համար միջազգային համագործակցության և միջմշակութային ուսուցման հնարավորությունների և հմտությունների ստեղծում:
- Երիտասարդության մասնակցությունը բազմազան հնարավորություններ ստեղծելուն, որոնք թույլ կտան երիտասարդներին մասնակցել որոշումների կայացման գործընթացներին և բարձրացնել մասնակցության մոտիվացիան:

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման գործընթացը ՀՀ-ում

Հայաստանում երիտասարդական աշխատանքի հիմնաքարը դրվել է 1991 թվականից հետո, երբ Հայաստանը հայտարարվեց որպես ինքնիշխան պետություն և ընտրեց ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն կառուցելու ուղին: Մոտ 70 տարի Հայաստանը մաս էր կազմում ԽՍՀՄ-ի, որտեղ երիտասարդական աշխատանքը գործում էր որպես հիմնական կանոն: Գործում էին համապատասխան պետական կառույցներ, մեխանիզմներ, ծրագրեր և ֆինանսավորում: Այնուամենայնիվ, այդ աշխատանքը խիստ զաղափարական և քաղաքական էր:

Անկախացումից հետո Հայաստանը գտնվում էր բարդ անցումային շրջանում և միայն 1995 թ.-ից էր, որ իրականացվում էր պետական երիտասարդական քաղաքականություն: Դրանում չկար «Երիտասարդական աշխատող», «Երիտասարդական աշխատանք» տերմինները, բայց պետությունն աջակցում էր երիտասարդական աշխատանքները: 1990 թ.-ին Հայաստանում սկսեցին գործել հասարակական և միջազգային կազմակերպություններ: Հիմնական թիրախը երիտասարդությունն էր, իսկ նպատակն էր աջակցել երիտասարդության խնդիրների լուծմանը: Այս տարիների ընթացքում նրանք բազմապատկվել են, ընդլայնվել են գործունեությունը:

Հայաստանում երիտասարդական աշխատանքի պատմական ֆոնն ու ավանդույթները մասամբ արտացոլված են Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թ. Հրամանագրում, որն իրականացվել է «Հետազոտություն երիտասարդական աշխատանքի և երիտասարդ աշխատողի մասին Ուսումնասիրություն. Երիտասարդության աշխատանքի ներկա վիճակը և դրա զարգացման հեռանկարները»: 2015 թ.-ի Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգերը մշակվել են բազում նյութերի հիման վրա տեղական և միջազգային երիտասարդական աշխատանքային փորձի: 2014 թ. հաստատվեց Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որտեղ որպես երիտասարդական քաղաքականության սուբյեկտ սահմանվեց «երիտասարդական աշխատողը»: Այս հայեցակարգում նշվում է, որ երիտասարդական հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետությանն ու գրանված հասարակական կազմակերպություններն են, որոնք համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում են երիտասարդական աշխատանք [7]:

Վերջին տարիներին երիտասարդության ոլորտի պետական համակարգում իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ, որի հետևանքով լուծարվել են «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը՝ իր 10 մարզային երիտասարդական կենտրոններով: Ներկայումս չեն գործում Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը, մարզպետներին առընթեր երիտասարդական խորհուրդները: Նոր հիմունքներով այս կառույցների վերակազմակերպմանը զուգահեռ անհրաժեշտություն կա ժամանակի պահանջներին և արդի մարտահրավերներին համապատասխանեցնել երիտասարդական ոլորտի քաղաքականությունը և ծրագրերը, աջակցել միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցությանը, ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում

Հայաստանի ներգրավմամբ պայմանավորված երիտասարդության ոլորտում բազմակողմ ձևաչափերով համագործակցության նոր հնարավորությունների իրացմանը [6]:

Հայաստանյան իրականության մեջ երիտասարդական աշխատանքի՝ որպես մասնագիտության ընկալումը դժվարանում է՝ պայմանավորված գործող երիտասարդական ՀԿ ոլորտային բազմազանության հանգամանքով: Ընդ որում, ըստ գործունեության առաջնային ոլորտի՝ երիտասարդական ՀԿ-ները (տվյալ դեպքում այն կազմակերպությունները, որոնց գործունեության առաջնային ոլորտը երիտասարդության հիմնահարցերն են) հարցվածների համախմբության մեջ կազմում են 19%, որոնց ըստ քանակի՝ հաջորդում են իրավապաշտպան կազմակերպությունները՝ 15.2%, այնուհետև կրթական կազմակերպությունները՝ 9.6%, ապա՝ մնացածը: Ինչպես տեսնում ենք, կազմակերպությունների 19%-ի մոտ է առաջնային ոլորտ համարվում երիտասարդական հիմնահարցերը:

Աղյուսակ 2. Երիտասարդական ՀԿ գործունեության առաջնային ոլորտը [15, 21]

Պատասխան	Քանակ	Տոկոս (%)
Երիտասարդության հիմնահարցեր	69	19.0
Մարդու իրավունքներ	55	15.2
Կրթություն և գիտություն	35	9.6
Համայնքային զարգացում	32	8.8
Հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնահարցեր	27	7.4
Մշակույթ	24	6.6
Առողջապահություն	21	5.8
Կանանց հիմնահարցեր	18	5.0
Բնապահպանություն	11	3.0
Մասնագիտական զարգացում և զբաղվածություն	10	2.8
Սպորտ	7	1.9
Այլ	30	8.3
Ընդամենը	363	100

Երիտասարդական աշխատանքները ՀՀ-ում իրականացվում են հիմնականում դասընթացների, սեմինարների, հանդիպումների, քննարկումների, խորհրդատվության, համաժողովների և գիտաժողովների կազմակերպման տեսքով, ինչը

հաստատվում է նաև Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման հետազոտության արդյունքներում [15, 22]: Տպագրություններ, վերլուծական և հետազոտական աշխատանքները կազմում են միայն 10-15%:

սարդական կազմակերպություններ, սակայն նրանց գործնելության մասշտաբներ շատ փոքր են: Կան նաև այլ կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Վորդ Վիժն Հայաստան» զարգացման և բարգործական միջազգային կազմակերպություն, «Հայկական կարիտաս» ԲՀԿ, որոնք իրականացնում են համայնքային զարգացման ծրագրեր, որոշակի առնչություն ունենալ երիտասարդներին:

Որպեսզի ոլորտի հիմնախնդիրները կարողանանք համակողմանի բացահայտենք, նաև իրականացրել ենք բենչմարքինգ, որը իրենից ներկայացնում է «ավագույն նշաճողին հասանելիության ձգտումը»: Այն իրենից ներկայացնում է լավագույն փորձի ուսումնասիրում, արժևորում և համեմատում [16, էջեր 166-167]: Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի բենչմարքինգի համար ընտրվել է Էստոնիայի փորձը՝ ուսումնասիրելով 2010 թ.-ի և 2020 թ.-ի որոշակի ցուցանիշները և դրանց փոփոխությունները, այնուհետև համեմատվել է Շիրակի մարզի ցուցանիշների փոփոխությունների հետ: Մասնավորապես նշենք, որ Էստոնիան դեռևս 1999 թ.-ին ուներ Երիտասարդական աշխատանքի ակտ, Էստոնիայի երիտասարդական աշխատանքի հայեցակարգ, նաև մշակվել է Էստոնիայի երիտասարդության աշխատանքի զարգացման ծրագիր 2014-2020: Իսկ Հայաստանի, մասնավորապես Շիրակի մարզի տվյալները ձեռք են բերվել հարցման, դիտման և կազմակերպությունների տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում: Համեմատության համար առանձնացվել է հետևյալ ցուցանիշները՝

- Երիտասարդական աշխատանքներին ներգրավվածներ ընդհանուր երիտասարդության %-ից,
- Մեկ երիտասարդական կենտրոնում շահառուների միջին թվաքանակ,
- Կազմակերպված երիտասարդական աշխատանքների քանակ,
- Վերապատրասված երիտասարդական աշխատանք իրականացնողների տոկոսը,
- Իրականացված երիտասարդական աշխատանքների բավարարվածության մակարդակը:

Ներկայացված արդյունքներից ակնհայտ է դառնում, որ նշված ժամանակահատվածում Էստոնիայում և Հայաստանում, մասնավորապես Շիրակի մարզում 100% ավելացել է կազմակերպված երիտասարդական աշխատանքների քանակը: Աճ է գրանցվել երկու երկրներում էլ երիտասարդական աշխատանքներին ներգրավվածների ընդհանուր քանակում, մասնավորապես Շիրակի մարզում 28%, իսկ Էստոնիայում՝ 18%: Սակայն պետք է հաշվի առնել այն

փաստը, որը Էստոնիայի ընդհանուր երիտասարդության 60% 2020 թ.-ին ներառվել է երիտասարդական աշխատանքներին, իսկ Շիրակի մարզում՝ միայն 35%:

Հաջորդ ցուցանիշի համար կարելի է նշել, որ Էստոնիայում միայն 38.4%-ով է աճել մեկ երիտասարդական կենտրոնում շահառուների միջին թվաքանակը՝ հասնելով 1384: Միևնույն ժամանակ Շիրակի մարզում այս ցուցանիշը աճել է 250%-ով՝ հասնելով 700: Սակայն նշենք, որ Էստոնիայում կան բազմաբնույթ և բազմաթիվ երիտասարդական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններ, որոնք արդեն ձևավորված և հստակեցված աշխատանքներ են իրականացնում ոլորտում և ունեն իրենց հստակ որոշված շահառուների շրջանակը: Իսկ Հայաստանում, մասնավորապես Շիրակի մարզում այս ոլորտը դեռ ձևավորման փուլում է և կան սակավ քանակի կազմակերպություններ, որոնք հստակ իրականացնում է երիտասարդական մասնագիտացված աշխատանքներ: Ինչ վերաբերում է վերապատրաստված երիտասարդական աշխատանք իրականացնողների քանակին, ապա նշենք, որ Էստոնիայում այն աճել է 5%-ով՝ հասնելով 15%-ի, իսկ Շիրակի մարզում այն աճել է 53%-ով՝ հասնելով 55%: Այս ցուցանիշի մեծ տարբերությունը պայմանավորված է նրանով, որ Էստոնիայում գոյություն ունեն համալսարաններ, որոնք տրամադրում են «երիտասարդական աշխատանք» կրթական ծրագիր, ինչպես նաև «սոցիալական աշխատանք» կրթական ծրագրում երիտասարդական աշխատանքին առնչվող դասընթացներ կան: Իսկ Հայաստանում, մասնավորապես Շիրակի մարզում, հիմնականում երիտասարդական աշխատանքի հմտությունները և գիտելիքները ձեռք են բերվում հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարների և վերապատրաստումների արդյունքում:

Կարևոր ցուցանիշ է նաև իրականացված երիտասարդական աշխատանքների բավարարվածության մակարդակը: Էստոնիայում այս ցուցանիշ նշված ժամանակահատվածում աճել է 60%-ով՝ հասնելով 85%-ի: Իսկ Հայաստանում նման հետազոտություններ չեն իրականացվել 2010 թ.-ին: Այդ իսկ պատճառով մշակվել է հարցման թերթիկ և հարցում է իրականացվել շահառուների շրջանակում իրականացված երիտասարդական աշխատանքների բավարարվածության մակարդակի որոշման համար: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ Շիրակի մարզում հիմնականում իրականացվել է կրթական, սոցիալական և մշակութային երիտասարդական աշխատանքներ և շահառուների բավարարվածություն կազմել է 78%:

Աղյուսակ 3. Հայաստանի և Էստոնիայի երիտասարդական աշխատանքների որոշ ցուցանիշներ

Ցուցանիշ	Հայաստան/ Ծիրակի մարզի օրինակ			Էստոնիա [17]		
	2010	2020	Փոփոխ.	2010	2020	Փոփոխ.
Երիտասարդական աշխատանքներին ներգրավվածներ ընդհանուր երիտասարդության %-ից	7%	35%	+28%	42%	60%	+18%
Մեկ երիտասարդական կենտրոնում շահառուների միջին թվաքանակ	200	700	+ 250%	1000	1384	+38.4%
Կազմակերպված երիտասարդական աշխատանքների քանակ	5	11	+120%	85	200	+135%
Վերապատրաստված երիտասարդական աշխատանք իրականացնողների տոկոսը	2%	55%	+53%	10%	15%	+5%
Իրականացված երիտասարդական աշխատանքների բավարարվածության մակարդակը	Տվյալ չկա	78%	-	25%	85%	+60%

Կատարված համապարփակ հետաուզոտության արդյունքում բացահայտվել է երիտասարդական աշխատանքի ինստիտուտի զարգացման գործում առկա հետևյալ հիմնախնդիրները՝ ըստ ոլորտների և մշակվել է դրանց զարգացման համար որոշակի քայլեր:

Աղյուսակ 4. Երիտասարդական աշխատանքի բարելավման ուղղված գործողություններ

Ոլորտ	Առաջարկվող գործողություններ
Իրավական դաշտ	<ul style="list-style-type: none"> • ոլորտի զարգացման ու կարգավորման համար իրավականորեն սահմանված միջգերատեսչական համագործակցության խթանում՝ հատկապես սպորտի և երիտասարդության հարցերի, կրթության և գիտության և սոցիալական ապահովության, տարածքային կառավարման նախարարությունների միջև/հետ • հկ/աշխատող/պետական ոլորտ շփման ու համագործակցության 50-50 ձևաչափով հարթակների մշակում ստեղծում /ուսուցողական համատեղ ծրագրեր, համատեղ քննարկման ֆորումներ/ • երիտասարդական աշխատանքի իրականաման պետական քաղաքականության սահմանում • պետական մակարդակում Երիտասարդության Ինստիտուտի ստեղծում
Որակի ապահովում	<ul style="list-style-type: none"> • Երիտասարդական աշխատանքի Ազգային մինիամալ ստանդարտների մշակում /կապված ազգային երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունների և ուղղությունների հետ/ • ԵԱ ծառայող մատուցող կատույցների ներքին հատուկ ստանդարտների, ուղենիշների, աշխատանքի կանոնակարգերի մշակման խթանում • Որակի ստանդարտների մշակման ուսուցողական ձեռնարկի պատրաստում և ուսուցողական մոդուլների մշակում • Որակի ստանդարտների օգտագործում անձանց ու կառույցների կարողությունների նաև աշխատանքի որակի ու ազդեցության զարգացման համար • Անվտանգության և ապահովության չափանիշների սահմանում երիտասարդական աշխատանք տրամադրող կառույցների գործունեության համար
Ունակությունների սանդղակի և ծրագրերի մշակում	<p>Երիտասարդական աշխատողների ունակությունների փաթեթի մշակում և փորձարկում, որի հիման վրա՝</p> <ul style="list-style-type: none"> - ինքնագնահատման մեխանիզմի սահմանում, - համապատասխան ուսուցողական գործընթացի և կրթական ծրագրի մշակում:
ԵԱ ընդհանուր հարթակ	<p>Երիտասարդական աշխատանք տրամադրող կառույցների, երիտասարդական աշխատողների, հանրային ժառայողների, ոլորտի միջազգային կառույցների համար ընդհանուր հարթակի ստեղծում, որը հնարավորություն կտա մասնագետների և այլ շահագրգիռ կառույցների շարունակական զարգացման փորձի փոխանակման, փոխօգնության, արդյունավետության բարձրացման, համատեղ յոթինգի համար:</p>
ԵԱ ոլորտի ֆինանսավորում	<ul style="list-style-type: none"> • դոնորային համայնքի կողողինացիա ապահովող մեխանիզմի սահմանում • ՏԻՄ և համայնքների ռեսուրսների մոբիլիզացիայի հնարավոր ապահովում և խթանում՝ տեղերում ոլորտի ֆինանսավորման համար

Ամփոփելով կատարված համեմատությունը և հետազոտությունը՝ կարող ենք նշել, որ Հայաստանում երիտասարդական աշխատանքների իրականացման գործընթացում կան որոշակի խնդիրներ, որոնք վերաբերում են իրավական դաշտի կարգավորումներին, կրթական համակարգերի անհրաժեշտ փոփոխություններին, պետություն ՏԻՄ երրորդ սեկտոր համագործակցային մեխանիզմներին, որոնց համար առաջարկում ենք իրականացնել որոշակի քայլեր, մասնավորապես երիտասարդական աշխատանքի իրականացման պետական քաղաքականության սահմանում, ՀԿ-ների, աշխատողների և պետական ոլորտի ստեղծել հարթակներ 50-50 համագործակցության ձևաչափով, Երիտասարդական աշխատողների ունակությունների փաթեթի մշակում և փորձարկում, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի ֆինանսավորման համար ՏԻՄ և համայքների ռեսուրսների մոբիլիզացիայի հնարավոր ապահովում և խթանում: Այս ամենը թույլ կտա բարելավել երիտասարդական աշխատանքի կազմակերպման և իրակացման որակը, որն էլ իր հերթին կբարձրացնի երիտասարդների կյանքի որակը, կնպաստի երիտասարդների բարեկեցիկ կյանքին, ինքնահաստատմանը և ինքնուսուցման:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Thole. W.** (2000). Kinder- und Jugendarbeit. Eine Einführung. Weinheim/München: Juventa Verlag.
2. **Williamson. H.** (1995). “At the crossroads: youth work in Wales”, Welsh Journal of Education, 1995, No. 2.
3. **Coussée. F.** (2009). “Cardijn versus Baden-Powell: The methodical turn in youth work history” in Gilchrist, R. et al. (eds) Essays in the history of youth and community work: discovering the past. Lyme Regis, Dorset: Russell House Publishing, pp. 116-132.
4. Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն, <http://escs.am/files/files/2019-08-30/0fa777a0948832aeef70c270377b7b08.pdf> (հասանելի է 24.07.2021 ժամը 17:15)
5. Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=83456&m=%27%27&sc=%20> (հասանելի է 26.07.2021 ժամը 13:10)
6. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. Ուզմանավարություն, [https://www.e-](https://www.e-draft.am/en/projects/3268/about)

- draft.am/en/projects/3268/about (հասանելի է 23.07.2021 ժամը 12:10)
7. Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96116> (հասանելի է 22.07.2021 ժամը 14:20)
8. Եվրոպական հանձնաժողովի սպիտակ թուղթ.նոր խթան եվրոպացի երիտասարդության համար <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/a3fb3071-785e-4e15-a2cd-51cb40a6c06b> (հասանելի է 21.07.2021 ժամը 16:15)
9. Երիտասարդական աշխատանքի ակտ <https://www.riigiteataja.ee/akt/12851236> (հասանելի է 27.07.2021 ժամը 17:40)
10. Էստոնիայի երիտասարդական աշխատանքի հայեցակարգ, <https://www.hm.ee/en/activities/youth/youth-work> (հասանելի է 15.07.2021 ժամը 16:45)
11. Երիտասարդության աշխատանքի զարգացման ծրագիր <https://entk.ee/noortepoliitika/noortevaldkond/> (հասանելի է 11.07.2021 ժամը 11:30)
12. Արտասահմանյան երկրներում երիտասարդական քաղաքականության իրավական կարգավորումները <http://db.rgub.ru/youthpolicy/2/an-1120-2.pdf> (հասանելի է 13.07.2021 ժամը 13:50)
13. The core principles of youth work, <https://www.europegoeslocal.eu/changemakerskit/core-principles-of-youth-work/> (հասանելի է 09.07.2021 ժամը 11:05)
14. Երիտասարդական աշխատանք, CM / Rec (2017) 4 ընդունված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, <https://rm.coe.int/recommendation-cmrec-2017-4-and-explanatory-memo-rus/16808e3d83> (հասանելի է 11.07.2021 ժամը 15:25)
15. ՀՀ Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, ԵՈՒԻ 2015
16. **Խաչատրյան Ն.Ն., Գասպարյան Կ.Է.,** Ծառայությունների Էկոնոմիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013, 176 էջ
17. Երիտասարդական ոլորտի զարգացման ծրագիր, Էստոնիայի երիտասարդական աշխատանքների կենտրոն, https://www.hm.ee/sites/default/files/nak_rus.pdf (հասանելի է 14.07.2021 ժամը 12:48)

Տժանա/Հանձնվել է՝ 22.06.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 29.06.2021
 Принята/Ընդունվել է՝ 06.07.2021